

ԿԱՐԱ-ՄՈՒՐ ԶԱՆ

Ե Ի

ՔԱՌԱՍՏԱՅՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ՍԵՐ ՍԵՂ

Նորերս թիֆլիսը մեծ հանդիսով ընդունեց հալ ազգի մի աշխատաւոր մշակին, որը իւր անխոնջ և սովորն աշխատանքով սկսել է կանոնաւորել մեր ազգային, եկեղեցական և ժողովրդական երգեցողութիւնը: Եկեղեցական երգերի վերաբերեալ քառաձայն դարձնելու փորձեր եղել են հանդուրձալ Գէորգ կաթողիկոսի օրով: Մի քանի մարդիկ դաւառներէից գնացել էին Էջմիածին սովորելու քառաձայն երգեցողութեան կանոնները՝ ձայների բաժանելը, ընտրութիւնը և այլն: Շնորհիւ մեզ անպատ պատճառների, ալլ գնացած մարդիկը չաջողութիւն չ'ունեցան, թէպէտ նոցա կատարեալ իրաւունքներ և միջոցներ էին տաւած ալլ դործը չաջողեցնելու և հասցնելու ամենակատարեալ դրութեան: Ազգային-ժողովրդական երգերի փորձը Կոնկաւտում իրօք պատկանում է Կարա-Մուրզային, որը նախ թիֆլիսում, ապա Բաքուում, ինչպէս կը տեսնենք այս կենսադրական համառօտ տեղեկութիւններից, հիմք դրեց քառաձայն-խմբական երգեցողութեան, որի արդիւնաւէտ դործունէութիւնը թիֆլիսը ըստ արժանւոյն գնահատեց, խրախուսելով նորան՝ ընդլայնելու իւր դործունէութիւնը և իրադործելու իւր մեծ ծրագիրը:

Քիչ թէ շատ մոզիկալի ճաշակ ունեցողը հալական երգեցողութիւնը իրատամբ արհամարհում է, ոչ ալն պատճառով, որ նա վատ է, աղքատ է, ոչ, հէնց ալն պատճառով, որ նա երգչում էր շատ անճոռնի, վատ և սատարիկ անախորժ: Պէտք էր մեծ ազդասիրութիւն ունենալ, որ չը ձանձրանար մարդ ալլ հալական երգեցողութիւնից, բացի ալն, որ երգչում էր քիթում՝ ամեն մի երգիչ ցոյց էր տալիս իւր անհաճօ ինքնուրուշութիւնները, ամեն մարդ ծռում էր եղանակը ըստ իւր քմբի: Ալլ բոլորը ուղղելու համար՝ հարկաւոր է մեծ ուժ, երկար ժամանակ, որը մի մարդու կարողութիւնից շատ բարձր է, բալց գլխաւորը դործի սկիզբն է: Ալլ դործի սկիզբը դրել է մեր մէջ Կարա-Մուրզան՝ իւր ներդաշնակ խմբական երգեցողութեամբ: Գործը չաջողեցնելու համար հարկաւոր էր հաստատ պատրաստութեամբ մի մարդ, որը կարողանար բացի 4 ձայնի վարժելու՝ եղանակները կենդանացնել, դարձնել եղանակը քաղցր, դուրեկան, ուրիշ խօսքով՝ հարկաւոր էր և նուրբ ճաշակ: Կարա-Մուրզային չաջողել է մինչև ալժմ քառաձայնի վերածել բերանից բերան պտտող 80 երգ, որից մօտ 50-ը երգած են, իսկ մնացածը սպասում են ժամանակին և հերթին, որ երգեն:

Քրիստոֆոր Կարա-Մուրզան բուն Ղրիմցի է, ազգով հալ, դաւաճու-

թեամբ՝ կաթողիկոս Նա պատկանում է ունեւոր ընտանիքի: Գեո մանուկ հասակում նա ցուց էր տալիս առանձին սէր դէպի երգեցողութիւնը և մուղիկան: Գեո չորս տարեկան հասակում, երբ նոցա մօտ մի անգամ հիւր է լինում ան ժամանակաւ Ղրիմում լաւտնի հաւերաժխտներէից մէկը, նա ժամերով լսում է եղել նորա նւաղը:

Պակաս չեն նպաստել այս դէպքում և նորա ընտանեկան հանգամանքները: Նոցա տունը, այսպէս ասած՝ մուղիկալի տուն է լինում. երգեցողութիւնը և մուղիկան անտեղից անպակաս է լինում, նոցա տունը դրեթէ միշտ լիքն էր լինում հոգեւորականներով, որոնք առհասարակ պաշտպան են լինում մուղիկալի և երգեցողութեան տարածման: Հէնց այդ հանգամանքին պիտի վերադրել, որ ալժմ Ղրիմում սակաւ տուն կը գտնուի, որ գործիք չ'ունենալ և նորանով չը պարագլէ: Իսկ Կ. Մուրադալի սէրը դէպի երգեցողութիւնը պէտք է վերագրել երկու հանգամանքի. նախ՝ նորա բնական տաղանդին և ապա մօրը, որ իր քաղցր և անուշիկ ձայնով պառկեցնում է եղել նորան անկողնի մէջ, և երրորդ, որ աւելի հասակ առած ժամանակ նա մասնակցում է եղել եկեղեցական ժամատացութեան:

Աղբընական ուսումը նա ստանում է Ղարասու-Բազարում, ուր ան ժամանակ լինում է 7 դասաւանդի բաղկացած մի դպրոց, որը անպիսի իրաւունքներով էր օժտւած, որ նորա սաները իրաւունք ունէին մտնելու բարձրագոյն դպրոցներ. ալժմ, կարծեմ, նորա իրաւունքները սահմանափակւած են և վերածւած երկու-երեք դասարանի: Այդ դպրոցում ուսանելիս, նա մասնաւոր կերպով սովորում է և մուղիկալ և մի փոքր ժամանակից վատու, մուղիկալում աւելի է լառաջադիմում, քան ուսման մէջ: Տասը տարեկան հասակում, նա աղատ կարողանում էր երգեր ձայնագրել և վարժ կարդալ, նւաղելով դաշնամուրի վերայ: Ուսման ընթացքը աւարտելով, հալըր կամենում էր նորան հոգեւոր պաշտօնի նւիրել. ուստի նա ուղարկւում է նորան Իտալիա՝ ս. Ղազարու վանքը: Բայց այդ ձանապարհորդութիւնը ի դուր է անցնում, որովհետեւ նորան չէ գրաւում հոգեւոր կոչումը և նա վերադառնում է հայրենիք. հալըր մի անգամ ևս փորձում է այդ, բայց կրկին ապարդիւն է անցնում: Այն ժամանակ հալըր վճռում է նորան պատրաստել իւր վաճառականական գործերի համար:

Հալըր դորա համար նորան ուղարկում է Օդեսսա հաշւապահութիւն սովորելու: Վերադառնալով տուն՝ նա մտնում է իրանց վաճառականական գրասենեակը, վարում է հօր գործերը և պահում նորա հաշիւները. բայց երկու դէպքում էլ անընդունակ է լինում վաճառականութեան մէջ նա մինչև անգամ պատճառ է լինում անազին ֆիասների, իսկ հաշւապահութեան մէջ նա լինում է շատ անփութ, որովհետեւ նորան զբաղեցնողը ոչ թէ թւերն են եղել, այլ երգեցողութիւնը և մուղիկան, որոնցով նա անչափ լաւորշտակւած էր: Հաշւապահութեան մատենի հետ միասին նա անբաժան ունենում է և նօտաները, որոնցով նա աւելի է զբաղւում, քան հաշա-

պահութեամբ: Մի անգամ, երբ կոնտորի ղեկն նա պարապելիս է լինում նոտաներ գրելով՝ հայրը վրայ է հասնում և խլելով տետրակները, բարկանում է վերան, առելով՝ քեղանից երբէք մարդ չի դուրս գալու:

Վլայ է հասնում 1874 թվականը, նա հրաւիրւում է ղինւորագրութեան և վինակը բնկնում է, բայց ունենալով առաջի աստիճանի արտօնութիւնը, նա ազատուում է գլխւորագրութիւնից: Նշանակւա նորան չէ լաջողւում, մի քանի հանդամանքների պատճառով, որոնց թւումն էր և աչքերի տկարութիւնը՝ գնալ Պետերբուրգի կոնսուլատորիան ուսում առնելու, բայց և աչնպէս, շնորհիւ իր ասկան աշխատութեան, նորան լաջողւում է բռնալի վերաբերեալ կուրսը անցնել մասնաւոր ուսուցիչների մօտ, միևնույն ժամանակ բաց չէլի թողնում ոչ մի նշանաւոր պիանիստին, որը լաճախում է եղել Ղլրմ: Զինւորագրութիւնից ազատւելով՝ նա մտադրւում է արդէն հաստատ նւիրւել սոյ իւր արհեստին: Ղլրմում մի լաւ սովորութիւն կալ, երիտասարդները՝ թէ աղաք և թէ օրիորդներ, հերթով հաւաքւում են իրար տուն և երկինները անցկացնում երգեցողութեամբ և, նապելով, երգում են թէ եւրոպական և թէ հալկական երգեր: Այդ սիրողների խումբը կառաւարում էր Աարա-Մուրզան իր մի քանի բնկերներով: Այդ առպարէր շատ փոքր էր գործելու համար, նա մանաւանդ որ հալերի թիւը շատ քիչ էր և երկրորդ, որ ժողովուրդը արդէն ինքը կրթւած էր մուղիկալի մէջ և մեծ կարիք չէր դրում դոցա մէջ: Հարկաւոր էր սոյ ուժը գործադրել մի աչնպիսի տեղում, ուր աւելի պահանջ էր դրացւում: Այդ բանում նորան գրգում են և ուրիշները, և ահա սկսւում դասեր էր դանում երկաթուղու գծի վերալ ծառայողների, գլխաւորապէս ինժեներների մօտ Հեռեկալ թւականին, երբ ծանօթանում է քաղաքի հետ, նա մտադրւում է իրագործել վազուցալ միտքը: Նա լրագրութեան միջոցով հրաւէր է կարգւում աչն հալ երգիչներին, որոնք կը կամենան ազգալին երգեր սովորել, թոյ քարեհաճեն շնորհ բերել իւր մօտ: Դուսով հաւաքւում են մի քանի տառեկալ մարդիկ, որոնցից բնարւում է մօտ 15-ը և սկսում է նոցա հետ պարապել: Այդ գործում նորան օգնում են պ.պ. Վարդիկեան և Մ. Դաւամեան (Թիթլիանցի):

Աարճ միջոցում նա աչնքան երգեր է սովորեցնում, որ կարողանում է դուրս գալ բն: Առաջին կօնցերտը կալանում է աչնանը՝ նախկին Արծրունու թատրոնում: Հաւաքւում է բառականին հասարակութիւն, ամենքը սպասում են վարադուրի բարձրանալուն, վերջապէս վարադուրի ղետից լաւում է մեղմ երգեցողութիւն: Առաջին տունը երգելուց ղետո, բարձրանում է վարադուրը և հասարակութեան առջն պատկերանում է մի խումբ՝ պատմական հագուստով: Առաջին կօնցերտը ունենում է երեք բաժանմունք և բաղկացած է լինում 23 երգից, իսկ մնացածների հետ կից լինում է մի որ և իցէ դաւեշտ: Վերջինս անհրաժեշտ էր նորա համար, որ հալ հասարակութիւնը գետ սովոր չէր միմիաչն երգի համար փոյ աալ, նա պահան-

ջում էր, որ լինի մի որ և իցէ ներկայացումն: Այդ կօնցերտները գլուխ բերելու համար՝ նա ստիպւած է եղել շատ արգելքների և վերաւորանքների դիմադրելու: Եւրպէս թատերասէրները ինչ ինչ պատճառներէից դրդած՝ սկսեցին տարածել դանազան զրպարտութիւններ: հալ, աւսինքն զիրթ-զիրիլ կօմպօզիտօրները, նկատելով իրանց ակօղեանին, իրանց կողմից աշխատում էին նորան վաւր գցել, արգելելով դպրոցի հալ աշակերտներին մասնակցելու ալդ տեսակ մի գործի: Բայց Կարա-Մուրզան, շնորհիւ իւր երկաթի կամքին, չը չուսահատուեց, աւելի մեծ եռանդով կալաւ գործին, չը նախելով նորան, որ լրագրութեան մէջ էլ երևացին բոլորովին անտեղի զրպարտութիւններ, իբր թէ Կարա-Մուրզան եկեղեցական երգերը եկեղեցում երգում է եւրոպական եղանակով, մինչդեռ ալդ թիւրիմացութիւն էր: Քաջ համոզւած լինելով, որ մի նոր գաղափար առաջ տանելիս անպիտի խոչնդոտներ լինում են, նա քաջութեամբ դիմադրում էր:

Կարա-Մուրզան թիֆլիսում շատ չի մնում, շուտով հեռանում է Բաքու: Դորա պատճառը լինում է ինժեներ պ. Կարապետեանցը, որի որդոց ուսուցիչն էր և միևնոյն ժամանակ նորա ամենամտերիմ բարեկամը: Յոյս դնելով պ. Կարապետեանցի աջակցութեան վերայ՝ նա գնում է: Տեղական («Կասպի») լրագրում ցատարարում է, թէ Կարա-Մուրզան կամենում է երգեցիկ խումբ պատրաստել թէ կօնցերտներ տալու համար և թէ եկեղեցում երգելու: Այս լուրը արագ տարածւեց քաղաքի մէջ և շուտով ժողովեցան տեղական կլուբի դահլիճը հարկւրից աւելի երիտասարդներ: Կարա-Մուրզան նոցա ձգեց ըստանայ և անուհետս որոշեց օրը, երբ պիտի ժողովէին պարապելու: Դահլիճը ձրիաբար լատկացրեց պարապելու համար Մարդասիրական Ընկ., որը, ալդ տեսակ դէպքերում, միշտ չէ խնայում իր օգնութիւնը:

Խումբը, որ գլխաւորապէս բաշկացած էր դանազան դասակարգերից՝ ինչպէս ուսուցիչներից, արհեստաւորներից, աշակերտներից, գործակատարներից և ալլն, սկսեց ամենաչն սիրով չաճախել պարապմունքներին:

Գործի վեհութիւնը, Կարա-Մուրզայի քաղցր վարմունքը, նորա վերին աստիճանի տոկունութիւնը մի տեսակ կախարդել էին խմբին. ոչ ոք, ոչ ոք իսկ ձմեռալ սաստիկ բուքին, պարապմունքից չէր մնում: Պարապմունքներին ներկայ գտնւելով, Կարա-Մուրզայի մանկավարժական հմտութիւնը, եռանդը և բոլոր տաղանդը տեսնել ցանկացողները, պէտք է ներկայ լինէին նորա պարապմունքներին, երբ մի կարճ ժամանակում 60 հոգու՝ լսողութեամբ սովորեցնում էր մի նոր եղանակ, որ խումբից մի քանիսը միայն գիտէին: Կարող եմ հաստատ վկայել, որ նա հմուտ ուսուցիչ է. նա երբեմն կարողանում էր ամենադժուար երգը մէկ կամ երկու անգամում սովորեցնել: Խմբին մասնակցում էին և պ. պ. Վարդիկեանց և Ն. Շահյանեանց, որոնք Կարա-Մուրզայի շնորհիւ կարողացան հուշակ տառնալ, ունենալ ժամանակ իրանք ևս ոչ պակաս օգնելով գործի չաջողութեան:

Առաջին կոնցերտը կապացու նուեմբերի վերջերքում. խուռն բազմութիւն լցւել էր դահլիճը. ամենքի համար նորութիւն էր՝ մինչև այն ժամանակ դեռ ոչ ոք չէր լսել հայկական քառաձայն երգեցողութիւն: Կոնցերտը սկսւում է («Մեր հայրենիքով»), երգւում են երգերը շատ չաջող կերպով. հանդիսականները ընդունում են բուռն ծափահարութեամբ: Կարա-Մուր-դան ընծայ է ստանում մի ծխախոտի սուսի: Այս կոնցերտը որոշում է խմբի ապագան. հաստատ համոզւած լինելով, որ գործը առաջ կը դնակ, նա շարունակում է իւր պարապմունքները:

Այս չորս տարուէ ընթացքում Բաքւում տրւած է 15 կոնցերտ և երգւած է մօտ 50 երգ: Իսկ ընդամենը տւել է թէ Թիֆլիսում և թէ Բաքւում 20 կոնցերտ: Նիւթական առանձին շահ չի ստացել նա, մուտքը ելքն է ծածկել, իսկ եթէ մի բան էլ մնացել է, այն էլ բաժանւել է չքաւորներին: Բնդհանրապէս խումբը ծաղալում էր առանց մի որ և իցէ վարձատրութեան: Խումբը, բացի աղղալին երգերից, երգել է նաև պատարագի արարողութիւնը: Այժմ քառաձայն երգեցողութիւնը նոյն իսկ եկեղեցւոյ պահանջ է դառնել հասարակութեան. համար, այնպէս որ նորա բացակայութիւնը անսովոր է թւում հասարակութեան: Միայն վերջին ժամանակներս խոչնդոտների է հանդիպում, բայց չոյս ունինք, որ այդ տարաձայնութիւնները շուտով կը վերջանան: Այս չորս տարում տւած օգուտը կարող ենք հետևեալ կերպով ձևակերպել: Կ. Մուրդ, հասարակութեան ծանօթացրել է քառաձայն երգեցողութեան հետ, տարածել է բաւականին թուով մշակւած աղղալին երգեր, մշակել է մօտ 50 մարդու ձայն, որոնցից կազմած խումբը եղական է հալերիս մէջ, տւել է հասկացողութիւն մուղիկալի և կանոնաւոր երգեցողութեան մասին և այլն:

Կարա-Մուրդան իւր գործունէութեան լաւագոյն մասը սպասում է ապագայում. նա իւր կոչումը գտնում է բոլոր ժողովրդական երգերը հասարակութեանը ճշգրտութեամբ և նրբութեամբ մատակարարելու մէջ: Այդ նպատակը իրագործելու համար, նա մտադիր է մօտ ժամանակում անձամբ ճանապարհորդելու գիւղերը, բուն ժողովրդական երգեր ժողովելու նպատակով. մի տարի մտադիր է նւիրել Կովկասի ճանապարհորդութեան և մի տարի ևս Տաճկա-Հայաստանի ուսումնասիրութեան: Մինչ հիմա նորա երգածներէից շատ քչերն են ժողովրդական, մեծ մասը եւրոպական եղանակներ են հալերէն խօսքերով, կամ այդ աղղեցութեան տակ ստեղծւած:

Ներկորդ՝ նորա գլխաւոր ցանկութիւնը եկեղեցական երգերի կանոնաւորելն է: Նա, ինչպէս պատմում էր անցեալ տարի, իւր ծանօթներից մի քանիսին, անպատճառ մտադիր է բոլոր եկեղեցական երգեցողութիւնը վերածել 4 ձայնի, և Վեհափառ Կաթողիկոսի թուղտութիւնը ստանալուց լետու, բանալ կամ Բաքու կամ մի այլ տեղ երաժշտական ինստիտուտ, որտեղ, բացի իրանից, պիտի դասախօսեն և մի քանի հմուտ երաժիշտներ, սովորեցնեն բոլոր աշակերտներին երաժշտութեան բոլոր գի-

տուժիւնը, սովորեցնեն խմբեր կազմելու, աշխնքն վարժեցնել, թէ ինչպէս հարկաւոր է ձաճները բաժանել, որ աւարտողները պատրաստ լինին բոլորովին անկախ խմբեր կազմելու գաւառներում եկեղեցիների համար, որոնց իբր ձեռնարկ արդէն հրատարակւած կը լինին, Աթիուղիկոսի թուլատրութեամբ, քառաձաճի բաժանած եկեղեցական երգերը: Արա-Մուրդալի արժանիքներից մէկն էլ աճն է, որ նա հարադատ եղանակը (առաջին ձաճը) անհնելին չէ փոխում: Եթէ եկեղեցում երբեմն լսում է իբր եղանակի եղծում, ալդ պիտի վերագրել լսողի անզարգացած ճաշակին, երկրորդ՝ եկեղեցու ղեկավարին, որը սկզբից չէ նախատեսւած և գուցէ առաջին ձաճի քչութեան: Արա-Մուրդան, առաջին ձաճը հարադատ պահելու համար, շատ աշխատել է ուսումնասիրել հին և նոր եկեղեցական եղանակները: Կատուկ ալդ բանի համար ճանապարհորդել է նոյն իսկ կենդրոնից հեռու վայրեր, որտեղ եղանակները աւելի անփոփոխ են մնում, եղել է երկրորդ անգամ Վենետիկ և ալն:

Ա. ԶԼԻՅԵԱՆ: